ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
«ՎԵԴՈՒ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի Պուշկինի 7, +(374) 93042823 vedutiv1nuh@mail.ru

«Տաթևիկ Գորգինյան»Ա/Ձ -ին
(ՀՎՀՀ 43993369, էլ հասցե tatevikgorginyan5@gmail.com)

« 26»մայիս 2026թ

N 25

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

2026 թվականի հունվարի 09-ի «ՎԻՄ-ԳՀԱՊՁԲ-26/01» ծածկագրով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Վեդի համայնքի «Վեդու թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն»ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու)և«Տաթևիկ Գորգինյան »Ա/Ձ -ի (այսուհետ՝Վաճառող) միջև 2026 թվականի հունվարի 09-ին կնքվել է սննդամթերքի մատակարման N**«ՎԻՄ-ԳՀԱՊՁԲ-26/01»** ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)համաձայն որի՝ վաճառողը ստանձնել է գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը,իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար :

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք , որը չի կարող փոխարինել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Տաթևիկ Գորգինյան» Ա/Ձ –ի կողմից «25» մայիսի 2026թ. գրությունը Պատվիրատուն միակողմանի և մասնակի լուծում է Պայմանագրի Հավելված N 1 **չափաբաժին 4-ը(պանիր Չանախ) և չափաբաժին 8-ը (կաթնաշոռ):**

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 66 000 (վաթսունվեց հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը 99 000(իննսունինը հազար) ՀՀ դրամ, փոխանցել «ԱՐԴՇԻՆ ԲԱՆԿ »ԲԲԸ Վեդի մասնաճյուղի՝ 247760336104000 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները սույն ծանուցումը ստանալու պահից հաշված 10 /տասը/ օրվա ընթացքում փոխանցվի նշված հաշվեհամարին, ապա Վաճառողի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

ՏՆՕՐԵՆ՝ ԼԻԱՆԱ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ